պայմաններում, ապրանքը մատակարարելու ժամկետի խախտման պահ է դիտարկել ոչ թե հայտի ներկայացման պահից 20 օրը, այլ՝ հենց պայմանագրով նախատեսված մատակարարման վերջնաժամկետը՝ դեկտեմբերի 25-ը և ի հիմնավորումն դրա Դիրքորոշում վերտառությամբ փաստաթղթին կից ներկայացված ապացույցներին, ապա՝ Դատարանն արձանագրում է, որ այն անհիմն է, քանի որ նախ միևնույն կողմերի միջև կնքված մեկ այլ մատակարարման պայմանագրի համանման պայմանների Պատասխանողի կողմից ենթադրյալ տրված մեկնաբանումը և կիրառումը պարտադիր բնույթ չի կրում և չի վերաբերում սույն գործին, բացի այդ՝ սույն գործով քննարկման առարկա Պայմանագրի պայմանները արդեն իսկ այլ մեկնաբանության են ենթարկվել Դատարանի կողմից, ավելին՝ Դիրքորոշմանը կից ներկայացված ապացույցները չեն պարունակում տեղեկատվություն այդ պայմանագրի շրջանակում ներկայացված պատվերով (հայտով) սահմանված ժամկետի վերաբերյալ, որի պարագայում հնարավոր չէ հաստատուն եզրահանգումներ անել Պատասխանողի կողմից պայմանագրի պայմանների նման մեկնաբանման մասին:

Ինչ վերաբերում է Հայցվորի ներկայացուցչի կողմից 2023թ. փետրվարի 8-ին Դատարան մուտքագրված Դիրքորոշում վերտառությամբ փաստաթղթին կից ներկայացված օտար լեզվով ապացույցին, ապա՝ Դատարանն արձանագրում է, որ բացակայում է դրա հայերեն պատշաճ թարգմանությունը, այսինքն՝ ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 16 հոդվածի 1-ին մասի պահանջների խախտմամբ, հետևաբար՝ այն չի քննարկում:

Ամփոփելով՝ Դատարանը եզրահանգում է, որ ներկայացված հայցն անհիմն է և ենթակա է մերժման:

<u>Դատական ծախսերի բաշխման հարցը</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101 հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հայցը ենթակա է մերժման, իսկ Հայցվորի կողմից նախապես 80,000.00 ՀՀ դրամի չափով վճարվել է պետական տուրքի գումարը, Դատարանը եզրահանգում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191, 192 և 234.12 հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Վագա-Ֆարմ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ 2022թ. փետրվարի 22-ին կնքված թիվ ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/19-6 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին և «Վագա-Ֆարմ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 2022թ. նոյեմբերի 14-ի որոշումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաբննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ծանոթություն: վճիռը մտել է օրինական ուժի մեջ

« » _____ 2023թ.:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ